
**ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊՈՒ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

ՄՅԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ

Միջազգային քրեական դատարան ստեղծելու առաջին գործնական փորձը կատարվել է դեռևս 1474 թ.: Նկատի ունենք Վերին Հռենոսի Բրեյզահ ամրոցի հրամանատարի՝ Բուրգունդիայի դուքսի դատավարությունը: Դաշինքը, որի կազմում էին Ավստրիան, Ֆրանսիան, Բեռնը և Վերին Հռենոսի քաղաքները, միջոցներ ձեռնարկեց նրա անօրինական գործունեությունը դադարեցնելու համար: Արդյունքը եղավ այն, որ ամրոցը գրավվեց, իսկ հրամանատար Հագենբակը ձերբակալվեց և Ավստրիայի էրցհերցոգի կարգադրությամբ դատապարտվեց ոչ թե սովորական դատարանի, այլ հատուկ ստեղծված **ad hoc** դատարանի կողմից, որի կազմում էին Դաշինքի երկրների և քաղաքների 27 դատավորներ: Հրամանատար Հագենբակի դատավարությունը կարևորվում է միջազգային հանրության հիմնարար արժեքները պահպանող նորմերին հակասող վարքագծի համար միջազգային մակարդակով պատժամիջոցներ կիրառելու պրակտիկայի ձևավորման առումով¹:

Հարկ է նշել, որ միջազգային քրեական դատարան ստեղծելու իրական քայլ կատարվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1919 թ. Վերսալի և 1920 թ. Սևրի հաշտության պայմանագրերի հիման վրա՝ պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց պատասխանատվության ենթարկելու համար: 1918 թ. նոյեմբերի 11-ին «պատերազմական հանցագործների» պատասխանատվությունը սահմանելու համար Գերմանիայի դեմ պատերազմած պետությունները ձևավորեցին Դաշնային հանձնաժողով: Վերսալի հաշտության պայմանագրով նրանք պարտավորվեցին պատերազմական հանցագործության մեջ մեղադրվող Վիլհելմ II-ին և Գերմանիայի մյուս քաղաքացիներին դատելու համար ստեղծել միջազգային հատուկ դատարան, ինչպես նաև ազգային դատարաններ (հոդվ. 227-230): Դատարանը կազմվեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից նշանակված հինգ դատավորներից: Դաշնակից և միավորված պետությունները Գերմանիայի նախկին կայսր Վիլհելմ II Հոգենցոլլերին մեղադրում էին այն բանում, որ նա «բարձրագույն անարգանք էր հասցրել միջազգային բարոյականությանը և պայմանագրի սրբազան ուժին»:

Պատերազմական հանցագործությունների և իր քաղաքացիների դեմ գործած ցեղասպանության համար թուրքիային ներկայացվող մեղա-

¹ Стен Балан О. И. История и необходимость создания Международного уголовного суда // "Московский журнал международного права". 2/2004/54, № 125:

դրանքը միջազգային իրավական ձևակերպում ստացավ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրում, որի 226 հոդվածում նշվում է. «Օսմանյան պետությունը ճանաչում է Դաշնակից տերությունների իրավունքն իրենց զինվորական դատարաններում պատասխանատվության ենթարկելու այն անձանց, ովքեր մեղադրվում են պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող գործողություններ կատարելու մեջ: Օրենքներով նախատեսված պատիժները կկիրառվեն այն անձանց նկատմամբ, ովքեր կճանաչվեն մեղավոր»²:

Սևրի հաշտության պայմանագիրը չվավերացվեց, և դրա դրույթներով նախատեսված պատերազմական հանցագործների պատասխանատվության մասին պարտավորությունը միջազգային իրավական ուժ չստացավ, սակայն Վերսալի և Սևրի հաշտության պայմանագրերով նախատեսված միջազգային դատարանների ստեղծման գաղափարը, դատարանների կառուցակարգը և իրավագործության բնույթը նպաստեցին, որ հետագայում խաղաղության և մարդկության դեմ ուղղված միջազգային քրեական հանցագործությունների դեմ պայքարը դրվի միջպետական իրավական հիմքերի վրա³:

Վերը նշված միջազգային դատարաններ ստեղծելու փորձը հատկապես օգտակար եղավ ֆաշիստական Գերմանիայի կատարած հանցագործությունների համար մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով 1945 թ. օգոստոսի 8-ին Լոնդոնում ստորագրված քառակողմ համաձայնագրի հիման վրա ստեղծված միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրությունը, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Յեռավոր Արևելքում կատարած հանցագործությունների համար ճապոնական գլխավոր հանցագործներին պատժելու նպատակով ստեղծված՝ Տոկիոյի միջազգային զինվորական դատարանի հիմնադրման վերաբերյալ փաստաթղթերը մշակելիս⁴:

Հարավսլավիայի տարածքում մարդկության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունները քննելու համար ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993 թ. մայիսի 25-ին ստեղծեց Միջազգային քրեական տրիբունալ և հաստատեց դրա կանոնադրությունը⁵:

Մշտապես գործող Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, որը մշակվեց և ընդունվեց տասնամյակների ընթացքում, ու ընթացակարգի և ապացուցման կանոնները, որոնք Դատարանի կանոնադրու-

² "Севрский мирный договор и акты, подписанные в Лозане". Полный перевод с французского подлинника. Под ред. проф. Ю. В. Ключникова и А. Сабанина. М., 1927, с. 67.

³ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները, Եր., 2011, էջ 132:

⁴ Տե՛ս "Предложение делегации СССР о суде над главными военными преступниками, 30 июля 1945 г., № 132", "Меморандум делегации Великобритании делегациям СССР и США о суде над главными военными преступниками 30 июля 1945 г., № 120", "Проект телеграммы делегации Великобритании министерству иностранных дел Великобритании по вопросу о главных военных преступниках 1 августа 1945 г." // "Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг.". Том VI, Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.). Сборник документов. М., 1984:

⁵ Տե՛ս Резолюция 827(1993), принятая СБ ООН 25 мая 1993 г.:

թյան կիրառման գործիք են, այսօր այն բացառիկ իրավական ակտերն են, որոնցում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են քրեական արդարադատության համար ելակետային նշանակություն ունեցող սկզբունքները և անձի իրավունքներն ինչպես հետաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում:

Կարելի է արձանագրել, որ մարդու իրավունքների միջազգայնացմանը միտված վերոնշյալ **ad hoc** Միջազգային քրեական դատարանը և 1998 թ. ստեղծված մշտապես գործող Միջազգային քրեական դատարանը ոչ միայն հիմնվեցին նախորդ տասնամյակներում մարդու քրեաարդարադատական իրավունքների միջազգային-իրավական պաշտպանության ոլորտում լուրջ ձեռքբերումների վրա, այլև կոնկրետ իմաստ հաղորդեցին արդար դատաքննությանը և մեղադրյալի իրավունքներին առնչվող միջազգային-իրավական չափորոշիչներին դրանք կիրառելու և մեկնաբանելու առումով:

Ad hoc միջազգային քրեական դատարանները իրենց ստատուտների և ընթացակարգի ու ապացուցման կանոնների դրույթները մեկնաբանելու միջոցով (*inter alia*) էապես նպաստեցին նախադեպային իրավունքի ստեղծմանը, որը իր հերթին կարևոր նշանակություն ունեցավ 1998 թ. Չռոմի միջազգային քրեական դատարանի ստատուտում քրեաարդարադատական չափորոշիչների ամրագրման համար:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցի պատասխանը, թե նախադեպերը ինչպիսի դեր ունեն միջազգային քրեական տրիբունալների որոշումների ընդունման հարցում կա՞րոյոք ուղղահայաց ենթակայություն նշված տրիբունալների դատական, մասնավորապես վերաքննիչ և դատական բաժանմունքների միջև: Նախ անդրադառնանք աշխարհի հիմնական իրավական ընտանիքներում նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի մասին հիմնական դիրքորոշումներին, քանի որ վերոհիշյալ միջազգային քրեական տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի ստատուտներն ու ընթացակարգի և ապացուցման կանոնները աշխարհի հիմնական իրավական համակարգերի և նրանց քրեադատավարական ընթացակարգերի միջև յուրատեսակ փոխզիջման արդյունք են⁶:

Ընդհանուր իրավունքի երկրներում ավանդաբար գործում է *stare decisis*-ի կամ պարտադիր նախադեպի կանոնը, որի համաձայն՝ դատարանները կաշկանդված են նախկինում կայացրած իրենց որոշումներով: Սակայն, 1966 թ. Լորդերի պալատը՝ որպես Մեծ Բրիտանիայի բարձրագույն դատական ատյան, որոշեց, որ մինչ ինքը կշարունակի նախկինում կայացրած իր որոշումները համարել պարտադիր, որոշակի դեպքերում կարող է նաև չհետևել դրանց, երբ առերևույթ դա ճիշտ կհամարի⁷:

Ընդհանուր իրավական համակարգերի ուսումնասիրության պրակտիկան վկայում է, որ բարձրագույն դատարանների ճնշող մասը ճանաչում է նախադեպերի պարտադիր ուժը, բայց նաև պահպանում է որոշակի հանգամանքներում դրանցից շեղվելու հնարավորությունը: Մասնավորա-

⁶ Չդումն ըստ՝ "Essays on the Rome statute of the International criminal court", Vol. 1, ed. by Flavia Lattanzi and William A. Schabas, Sirente Pub., 1999, էջ 281:

⁷ Տե՛ս **R. Cross and J. W. Harris**, Precedent in English law, Oxford University Press, 1991, էջ 104:

պես, Լորդերի պալատը նշված հարցի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները ձևակերպել է մի շարք որոշումներում:

ԱՄՆ Գերագույն դատարանը նշված հարցի վերաբերյալ նույնպես ձևավորել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Օրինակ՝ «Planned Parenthood of Southeastern Pennsylvania et al v. Robert P. Casey» գործով ԱՄՆ Գերագույն դատարանը նշել է. «Նախադեպերին հետևելու պարտավորությունը սկսվում է անհրաժեշտությունից, և հենց անհրաժեշտությունն է որոշում դրա կիրառման հետագա սահմանները... Դատարանը գտնում է, որ մեր Սահմանադրության հիմքում ընկած իրավունքի գերակայության հայեցակարգն է, որ պահանջում է դատական վճիռների այդպիսի շարունակականություն և հաջորդականություն, ուստի նախադեպերի կիրառությունն անհրաժեշտ և պարտադիր է: Սակայն սա կարող է հանգեցնել հակառակ ծայրահեղության, երբ նախադեպային հանդիսացող դատական որոշումը ժամանակի ընթացքում սկսի սխալ ընկալվել, որը դրա կիրառումը կհանգեցնի արդարադատության խաթարմանը»⁸: Նույն դատարանը վերոհիշյալ գործով ձևակերպել է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում թույլատրելի է առկա դատական նախադեպից շեղումը: Դրանք են՝

ա. երբ գործնականում ապացուցվում է նախադեպում ձևակերպված իրավունքի կանոնի անաշխատունակությունը,

բ. երբ իրավունքի սկզբունքներն այնքան են զարգանում, որ հին կանոնը այլևս ընկալվում է «որպես հնացած տեսության մնացուկ»,

գ. երբ փաստերն այնքան փոխված են, որ հին կանոնը զրկվում է նշանակալի փաստարկվածությունից և կիրառելիությունից⁹:

Մայրցամաքային իրավական համակարգ ունեցող երկրներում *stare decisis*-ի կամ պարտադիր նախադեպի կանոնը մեծ մասամբ չի ընդունվում, սակայն այդ երկրների բարձրագույն դատական ատյանները հիմնականում հաշվի են նստում նախկինում իրենց կայացրած որոշումների հետ: Մասնավորապես, Ֆրանսիայի իրավական համակարգում, չնայած *stare decisis*-ի կանոնի ձևական բացակայությանը, հստակ նկատելի է բարձր դատական ատյանների որոշումներին հետևելու դատարանների դիրքորոշումը¹⁰: Իսկ ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանին (Ֆրանսիայի բարձրագույն դատական ատյանը), ապա այն մշտապես կարող է վերանայել նախկինում կայացրած որոշումները: Սակայն բավականին հստակ է, որ դատարանը չի կարող այդպես վարվել առանց ծանրակշիռ փաստարկների¹¹:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (այսուհետ՝ ՄԻԵԴ), ապա «որպես ընդհանրացված պրակտիկայի և պրակտիկ անհրաժեշտության արդյունք՝ Հանձնաժողովը ընդունում է ՄԻԵԴ որոշումները որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի վերջնական հեղինակավոր մեկնա-

⁸ "Planned Parenthood of Southeastern Pennsylvania et al v. Robert P. Casey", 505 U. S. 833, decided June 29, 1992:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս **Rene David, Henry P. De Vries**, *The French legal system: an introduction to civil law systems*, Columbia University, 1958, էջ 113:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

բանություններ»¹², թեև *stare decisis*-ի կանոնը ձևականորեն բացակայում է ՄԻԵԴ-ի գործունեության մեջ: *Cossey*-ի գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ թեև ինքն ուղղակիորեն կաշկանդված չէ նախկինում կայացրած իր որոշումներով, բայցևայնպես մեծ մասամբ հետևում է դրանց և դրանցից շեղվում է միայն այն ժամանակ, երբ այդպես վարվելու ծանրակշիռ հիմքեր կան (*cogent reasons*): Դատարանը նշված գործով գտել է, որ «...ճշմարիտ է, որ դատարանը պարտավոր չէ հետևելու նախկինում կայացրած իր որոշումներին: Այնուամենայնիվ, դատարանը սովորաբար հետևում է իր սեփական նախադեպերին՝ ելնելով իրավական որոշակիության և դատարանի նախադեպային իրավունքի (*case law*) զարգացման նկատառումներից: Սակայն այս հանգամանքը չպետք է խանգարի դատարանին շեղվելու նախկինում կայացրած իր որոշումներից, եթե պարզվել է, որ այդպես վարվելու ծանրակշիռ հիմքեր կան: Այդպիսի շեղումը թույլատրելի է մասնավորապես այն դեպքերում, երբ կոնվենցիայի մեկնաբանությունները արտացոլում են տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները, ուստի համատեղելի են ներկայիս պայմանների հետ»¹³:

Այսպիսով, կարող ենք ընդհանրացնել, որ և՛ ընդհանուր, և՛ մայրցամաքային իրավական համակարգ ունեցող երկրներում դատարանները մեծ մասամբ հետևում են իրենց և իրենցից բարձր դատական աստիճանների որոշումներում սահմանված իրավական սկզբունքներին (*ratio decidendi*)՝ ելնելով իրավական որոշակիության, կայունության և կանխատեսելիության պահանջներից, և միայն բացառիկ դեպքերում են շեղվում դրանցից, երբ դրա համար կան ծանրակշիռ հիմքեր:

ՄԱԿ-ի Միջազգային դատարանում *stare decisis*-ի կանոնը չի գործում: Այն ուղղակիորեն ամրագրված է Դատարանի կանոնադրության 59 հոդվածում, որի համաձայն՝ Դատարանի որոշումը պարտադիր է միայն գործի կողմերի համար և միայն կոնկրետ գործով: Սակայն Դատարանի որոշումներում արտահայտվում են միջազգային իրավունքի այս կամ այն հարցի վերաբերյալ արժեքավոր դատողություններ, ուստի Դատարանն իր որոշումներում անընդհատ հղում է կատարում իր նախկին որոշումներին¹⁴: Միջազգային դատարանի դատավոր Մ. Ջորիչիչը «Peace treaties» գործով արտահայտած իր հատուկ կարծիքի մեջ նշել է հետևյալը. «... լիովին ճիշտ է, որ ոչ մի միջազգային դատարան կաշկանդված չէ նախադեպերով: Այն, ինչին դատարանը պետք է ուշադրություն դարձնի, միջազգային իրավունքի սկզբունքներն են: Եթե նախկին դատական որոշումը հիմնվում է այդպիսի սկզբունքի վրա, ապա դատարանը նմանատիպ գործեր քննելիս չպետք է անտեսի նախորդ գործում առկա դիրքորոշումները, քանի դեռ միջազգային իրավունքի վերոհիշյալ սկզբունքը գործում է միջպետական հարաբերություններում»¹⁵: Բացի այդ, դատարանի ստատուտի 38 հոդվածում ամրագրված է, որ դատարանն իրեն հանձնված վեճերը լուծելիս, որպես

¹² **Karen Reid**, *A practitioner's guide to the European convention on human rights*, Maxwell, London, 1998, p. 43.

¹³ "Case of *Cossey v. The United Kingdom*", № 10843/84, 27 September 1990, para. 35.

¹⁴ Տե՛ս **Лукашук И. И.** *Международное право, особенная часть*. М., 2010, էջ 274:

¹⁵ "Interpretation of peace treaties with Bulgaria, Hungary and Romania", *Advisory Opinion*, ICJ reports 1950, Judge Zoricic dissenting opinion, p. 104.

օժանդակ միջոցներ, կարող է կիրառել նաև դատական որոշումները: Այս դրույթից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումները կարող են նույն այդ դատարանի կողմից օգտագործվել որպես միջազգային սովորութային նորմերի առկայության, դրանց բյուրեղացման ապացույց:

Այժմ անդրադառնանք միջազգային քրեական տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի կողմից նախադեպերի կիրառության վերաբերյալ առկա հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Քննարկելով վերաքննիչ բաժանմունքների որոշումների նախադեպային նշանակությունը իրենց իսկ համար՝ հարկ է նշել, որ և՛ ad hoc տրիբունալների, և՛ Միջազգային քրեական դատարանի կանոնադրություններում բացակայում են նախադեպերի կիրառությանը նվիրված դրույթներ: Միակ բացառությունը, թերևս, Միջազգային քրեական դատարանի Չոնմի ստատուտի 21 հոդվածի 2-րդ կետում առկա այն դրույթն է, որի համաձայն՝ դատարանն իրավունքի սկզբունքներն ու նորմերը կարող է կիրառել այնպես, ինչպես դրանք մեկնաբանվել են իր նախորդ որոշումներում: Սակայն ad hoc տրիբունալները (մասնավորապես նախկին Հարավսլավիայի տրիբունալը) մի քանի գործերի քննության ընթացքում անդրադարձել են նախադեպերի կիրառությանը, ինչպես նաև այն հարցին, թե արդյոք տրիբունալների վերաքննիչ բաժանմունքների որոշումները նախադեպային պետք է հանդիսանան դատական բաժանմունքների համար:

Նախկին Հարավսլավիայի տրիբունալը առաջին անգամ անդրադարձավ նախադեպի կիրառությանը Կուպրեսկիչի գործը քննելիս¹⁶: Այս գործով տրիբունալի հիմնական դիրքորոշումների էությունն այն էր, որ, նրա կարծիքով, բնույթով միջազգային հաստատություն լինելով և հենվելով միջազգային իրավունքի վրա, Դատարանը չի կարող դատական նախադեպը կիրառել որպես իրավունքի աղբյուր: Այս գործով Դատարանը հանգեց այն եզրակացության, որ դատական որոշումները իրավունքի նորմերի առկայության որոշման օժանդակ միջոցներ են (այս դրույթը կրկնում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի 38 հոդվածում՝ դատական որոշումների վերաբերյալ ամրագրված դրույթը): Անդրադառնալով դատական բաժանմունքի համար վերաքննիչ բաժանմունքի որոշումների պարտադիր նախադեպային նշանակությանը՝ դատարանը գտավ, որ ընդհանուր իրավական համակարգին հատուկ stare decisis-ի կանոնը կիրառելի չէ միջազգային դատարաններում, ուստի պարտադիր նախադեպի կանոնը դատական տարբեր բաժանմունքների միջև չի գործում: Նախկին Հարավսլավիայի տրիբունալը այսպիսով եզրակացրեց, որ դատական նախադեպը միջազգային քրեական արդարադատության ուղղակի աղբյուր չէ, և որևէ միջազգային տրիբունալի (դատարանը նկատի ունեն Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալները) որոշում չի կարող նախադեպային համարվել այլ տրիբունալի կամ դատարանի համար: Դատարանը նախադեպերի արժեքը միջազգային տրիբունալների համար համարեց միայն այն, որ դրանք կարող են որևէ միջազգային-իրավական նորմի առկայության ապացույց լինել, և

¹⁶ Տե՛ս "Prosecutor v Zoran Kupreskich, Mirjan Kupreskich, Vlatko Kupreskich, Drago Josipovich, Dragan Papich, Vladimir Antich", Case No.: IT-95-16-T, Judgment of 14 January 2000, para. 540:

եզրակացրեց, որ դատարանը իրեն վերապահված իրավական խնդիրները պետք է լուծի օրենքի (իր կանոնադրության և ընթացակարգի ու ապացուցման կանոնների) և ոչ թե նախադեպերի հիման վրա¹⁷:

Հաջորդը, որտեղ նախկին Հարավսլավիայի տրիբունալն անդրադարձ է կատարում նախադեպերի կիրառության հիմնախնդիրներին, Ալեքսովսկիի գործն է¹⁸: Կարևոր է նշել, որ այս գործով դատարանի կատարած եզրահանգումները շատ դեպքերում չեն համընկնում Կուպրեսկիչի գործով դատարանի կայացրած վճռի մեջ առկա եզրահանգումներին: Այս գործով տրիբունալի վերաքննիչ բաժանմունքի կայացրած դատավճռի մեջ առկա են մի շարք կարևոր իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են նախադեպային համարվել տրիբունալի համար: Վերաքննիչ բաժանմունքը վերոնշյալ որոշման մեջ կարևորելով դատական որոշումների բողոքարկման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարր, և վերջինս համարելով միջազգային սովորության իրավունքի բաղկացուցիչ¹⁹ այնուհետև անդրադառնում է նախադեպերի կիրառության հետ կապված մի բավականին կարևոր հարցի, որի էությունը իրավական որոշակիության, կայունության, կանխատեսելիության պահանջի (դատարանը այս պահանջը համարել է քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր երաշխիքներից մեկը) համադրումն է բոլոր գործերով արդարադատություն իրականացնելու պահանջի հետ: Դատարանը այս գործով հանգեց այն եզրակացությանը, որ դատական որոշումների շարունակականության սկզբունքի անշեղ պահպանումը կարող է որոշ դեպքերում խաթարել արդարադատությունը:

Հարկ է նշել, որ այս հարցի հետ առնչություն ունեցող «Barcelona Traction» (Preliminary objections) գործով Միջազգային դատարանի վճռի մեջ արտահայտած իր հատուկ կարծիքում դատավոր Կ. Տանական ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը. «...դատական նախադեպերի նկատմամբ հարգանքը և արդարադատության շարունակականությանը հավատարիմ մնալը մեծապես կարևորվում են իրավական կայունության պահպանման տեսանկյունից, ինչը հավասարապես կարևորվում է և՛ միջազգային, և՛ ներպետական իրավունքում: Նույնատեսակ գործերը պետք է լուծվեն նույն ձևով և, եթե հնարավոր է, նույն փաստարկվածությամբ... մյուս կողմից՝ արդարադատության շարունակականության պահանջը երբեք բացարձակ չէ: Դատարանը երբեք չպետք է տատանվի վերանայելու իր նախկին որոշումները և չպետք է կաշկանդված լինի դրանցով: Դատարանի որոշումների հեղինակությունը չպետք է պահպանվի ի վնաս կոնկրետ գործով արդարադատություն իրականացնելու նրա լիազորության»²⁰:

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս "Prosecutor v. Z. Aleksovski", Case No.: IT-95-14/1-A, Judgment of 24 March, 2000:

¹⁹ Դատարանը մասնավորապես հղում է կատարում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին 1950 թ. եվրոպական կոնվենցիայի 6-րդ կետին, Մարդու իրավունքների 1969 թ. ամերիկյան կոնվենցիայի 8-րդ կետին, 1981 թ. ժողովուրդների և մարդկանց իրավունքների աֆրիկյան խարտիայի 7-րդ կետին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ կետին (տե՛ս "Prosecutor v. Z. Aleksovski", § 104):

²⁰ "Barcelona Traction, Light and Power Company, Limited, Preliminary Objections", Judgment, ICJ reports 1964, Judge Tanaka separate opinion, p. 65.

Հղում կատարելով այս կարծիքին և ելնելով իրավական որոշակիության և կայունության պահանջից, ինչպես նաև համարելով, որ դատական վճիռների բողոքարկման իրավունքը ներառում է նաև նույնատիպ գործերը նույն ձևով լուծելու պահանջը (the right of the accused to have like cases treated alike)՝ նախկին Հարավսլավիայի տրիբունալը Ալեքսովսկիի գործով եզրակացրեց, որ վերաքննիչ բաժանմունքը պետք է հետևի իր նախորդ որոշումներում առկա իրավական դիրքորոշումներին և սկզբունքներին, բայց պետք է կաշկանդված չլինի շեղվելու դրանցից, եթե ծանրակշիռ հիմքեր կան արդարադատության շահերի համար այդպես վարվելու²¹: Դատարանն անդրադարձ կատարեց նաև «ծանրակշիռ հիմքեր» (cogent reasons) հասկացությանը՝ եզրակացնելով, որ այդպիսիք ներառում են այն դեպքերը, երբ նախորդող դատական որոշումը կայացվել է սխալ իրավական հիմքի վրա, կամ երբ այդպիսի որոշումը կայացվել է per incuriam, այսինքն՝ առանց հաշվի առնելու օրենքի դրույթը կամ նախադեպային դատական որոշումը: Ընդհանուր իրավական դոկտրինայում per incuriam ճանաչված դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումները նախադեպային չեն կարող համարվել ավելի ցածր դատական ատյանների համար, ուստի վերջիններս կարող են շեղվել դրանցից:

Նախադեպային համարվող դատական որոշումներից շեղվելու չափանիշներին անդրադարձ է կատարել նաև դատավոր Հանթը Ալեքսովսկու գործով իր առանձին հայտարարության մեջ: Նա մասնավորապես նշել է, որ վերաքննիչ բաժանմունքի համար իր նախկին որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումներից շեղվելը պետք է տեղի ունենա միայն այն դեպքերում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, այսինքն՝ երբ նախորդող դատական ակտը հանգեցրել է արդարադատության սխալի, և եթե դրանում ամրագրված սկզբունքը (ratio decidendi) կիրառվի սովորական գործով, ապա կհանգեցնի նույն հետևանքների²²: Նախադեպային դիրքորոշումներից շեղվելու հիմքերի նման մեկնաբանության է հակված նաև դատավոր Մ. Գյունեյը²³:

Անդրադառնալով ratio decidendi-ի խնդրին՝ Դատարանը նշեց, որ պարտադիր չէ նախադեպային համարվող որոշման հիմքը կազմող գործի հանգամանքների և քննվող գործի հանգամանքների նույնությունը: Կարևորը այդ հանգամանքներից բխող իրավական լուծում պահանջող խնդիրների նույնությունն է: Սակայն, եթե նախորդող գործի հանգամանքները տարբերվում են քննվող գործից մի շարք կարևոր կետերով, դատարանը պարտավոր չէ հետևելու այդ որոշման մեջ առկա իրավական դիրքորոշումներին²⁴: Ըստ Դատարանի՝ եթե դատարանը գտնում է, որ քննվող գործի հանգամանքներից բխող հարցի վերաբերյալ առկա է երկու նախադեպային դատական որոշում, ապա ինքն է որոշում, թե որ նախադեպը կիրառի կամ ոչ մեկը չկիրառի՝ ելնելով արդարադատության շահերից:

²¹ Տե՛ս "Prosecutor v. Z. Aleksovski", § 107:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 80, § 8:

²³ Տե՛ս "Prosecutor v. Mico Stanic, Stoyan Zupljanin, Case No. IT-08-91-AR65.2, Decision on Mico Stanic's appeal against decision on his motion for provisional release, Dissenting opinion of Judge Guney", էջ 42:

²⁴ Տե՛ս "Prosecutor v. Z. Aleksovski", § 110:

Այսպիսով, եթե անփոփեմք նախկին Հարավսլավիայի տրիբունալի վերաքննիչ բաժանմունքի կողմից սեփական դատական նախադեպերը կիրառելու հիմնախնդրի վերաբերյալ ներկայացված համառոտ վերլուծությունը, կարելի է նշել, որ, որպես ընդհանուր կանոն, վերաքննիչ բաժանմունքը հետևում է սեփական նախադեպային որոշումներում առկա իրավական դիրքորոշումներին և միայն բացառիկ դեպքերում, ելնելով արդարադատության շահերի համար ծանրակշիռ հիմքերից, շեղվում է դրանցից:

Այժմ անդրադառնանք վերաքննիչ բաժանմունքի որոշումների նախադեպային նշանակությանը դատական պալատների համար: Վերաքննիչ բաժանմունքը այս հարցի վերաբերյալ արտահայտել է հետևյալ կարծիքը. ելնելով կանոնադրության ճիշտ մեկնաբանման և կիրառման անհրաժեշտությունից՝ վերաքննիչ բաժանմունքի որոշումներում առկա նախադեպային իրավական դիրքորոշումները պետք է պարտադիր ուժ ունենան դատական պալատների համար՝ հետևյալ պատճառներով.

1.Տրիբունալի կանոնադրությանը համապատասխան՝ վերաքննիչ բաժանմունքին տրված է դատական բաժանմունքների որոշումների դեմ բերված բողոքներով վերջնական դատական ակտ կայացնելու գործառույթ: Դա ամրագրված է կանոնադրության 25 հոդվածում, որի համաձայն՝ վերաքննիչ բաժանմունքը բողոքները քննում է իրավունքի սխալի հիման վրա, ինչն օրինական ուժից զրկում է դատական բաժանմունքի որոշումը, կամ փաստի սխալի հիման վրա, ինչը հանգեցնում է արդարադատության սխալի: Վերաքննիչ բաժանմունքի որոշումները վերջնական են:

2.Տրիբունալի հիմնարար նպատակը, այսինքն՝ միջազգային մարդասիրական իրավունքի լրջագույն խախտումների համար պատասխանատու անձանց դատական հետապնդման ենթարկելը չի կարող իրականանալ, եթե մեղադրանքի և պաշտպանության կողմերը վստահություն չունենան կիրառելի իրավունքի կայունության և կանխատեսելիության հարցում:

3.Ինչպես նշվեց, դատական որոշումների բողոքարկման իրավունքը միջազգային սովորության իրավունքի մաս կազմող արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչն է և ներառում է նույնատիպ գործերը նույն ձևով քննելու իրավունքը: Այս իրավունքը տրիբունալի գործունեության մեջ չի իրականացվի, եթե դատական բաժանմունքը ազատորեն շեղվի վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումներում առկա կողմնորոշիչներից և ինքնուրույն որոշի այն իրավական դրույթները, որոնք կիրառելի են տվյալ գործի համար: Եթե տրիբունալի գործունեության մեջ այն միտումը լինի, որ վերաքննիչ բաժանմունքի կողմնորոշիչները պարտադիր չհամարվեն դատական բաժանմունքների համար, ապա հնարավոր է իրավունքի նույն դրույթը կիրառվի մի քանի մեկնաբանություններով՝ հաշվի առնելով դատական բաժանմունքների քանակը: Սա անհամատեղելի կլինի տրիբունալի կողմից կիրառվող միասնական, համաձայնեցված, ունիֆիկացված և ռացիոնալ իրավական բազա ստեղծելու ձգտման հետ: Համաձայնեցվածության անհրաժեշտությունը չափազանց կարևորվում է տրիբունալի գործունեության մեջ, քանի որ դատական և վերաքննիչ բաժանմունքներն իրենց որոշումներում անընդհատ մեկնաբանում և զարգացնում են միջազգային մարդասիրական իրավունքի, միջազգային

քրեական իրավունքի, միջազգային քրեաարդարադատական նորմերը: Ե՛վ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի իրավունքները լիակատար կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ապահովել իրավական կայունության և որոշակիության անհրաժեշտ բազա²⁵:

Ինչպես տեսնում ենք, Ալեքսովսկու գործով տրիբունալի արտահայտած իրավական դիրքորոշումները, պայմանավորված տրիբունալի վերաքննիչ բաժանմունքի որոշումների նախադեպային արժեքով, տարբերվում են Կուպրեսկիչի գործով նույն խնդրի վերաբերյալ տրիբունալի արտահայտած դիրքորոշումներից: Ուստի հարց է ծագում, թե որ որոշման մեջ արտահայտված դիրքորոշումները կարող են խնդրո առարկա հարցի լուծման ուղենիշ համարվել: Այս հարցի պատասխանը որոշակիորեն ի հայտ է գալիս Սեմանգայի գործով վերաքննիչ բաժանմունքի արտահայտած դիրքորոշման մեջ, որտեղ դատարանը, հղում կատարելով Ալեքսովսկիի գործին, նորից վերահաստատեց այդ գործով տրիբունալի դիրքորոշումը, այն է՝ վերաքննիչ բաժանմունքը պետք է հետևի իր նախորդ որոշումներում առկա իրավական դիրքորոշումներին, բայց պետք է ազատ լինի շեղվելու դրանցից, երբ ծանրակշիռ հիմքեր կան այդպես վարվելու՝ ի շահ արդարադատության իրականացման:

Այսպիսով, նախկին Հարավսլավիայի և Ռուսնդայի տրիբունալներում որևէ իրավական խնդրի լուծման վերաբերյալ վերաքննիչ բաժանմունքի դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումները սովորաբար նախադեպային և ուղղորդիչ դեր են կատարում վերաքննիչ և դատական պալատների համար: Դրա ապացույց են նաև տրիբունալների դատական ակտերում առկա հղումները նախորդող բազմաթիվ որոշումներին: Տրիբունալների դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումները չափազանց կարևոր դեր են կատարում նաև մեղադրյալի դատավարական իրավունքների մեկնաբանման և պարզաբանման, ինչպես նաև միջազգային քրեաարդարադատական կառուցակարգի հետագա զարգացման համար:

Ինչ վերաբերում է Միջազգային քրեական դատարանին, ապա գործերի սակավությունը դեռևս հիմք չի տալիս խոսելու որոշումներ կայացնելիս նախադեպի նշանակության մասին: Համաձայնվելով գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, որ Հռոմի ստատուտի 21 հոդվածի 2-րդ կետի դրույթը, ըստ որի՝ դատարանը ոչ թե պարտավոր է, այլ կարող է իրավունքի սկզբունքներն ու նորմերը կիրառել այնպես, ինչպես դրանք մեկնաբանվել են իր նախորդ որոշումներում, վկայում է, որ *stare decisis*-ի կանոնը ընդհանուր միջազգային իրավունքի մաս չէ²⁶, այնուամենայնիվ նշենք, որ, իրավական որոշակիության և կայունության պահանջներից ելնելով, տրամաբանական չի լինի՝ դատարանը որոշակի գործերով իրավական նորմերն ու սկզբունքները մեկնաբանի և կիրառի այլ կերպ, քան կիրառել էր իր նախորդ որոշումներում, եթե այդպես վարվելու համար ծանրակշիռ հիմքեր չկան: Ուստի ենթադրելի է, որ Միջազգային քրեական դա-

²⁵ Տե՛ս նույն տեղը, § 113:

²⁶ Տե՛ս **Fabian O. Raimundo**, *General Principles of Law in the Decisions of International Criminal Courts and Tribunals*, Martinus Nijhoff Publishers, Boston, 2008, էջ 150:

տարանում որոշումներ կայացնելիս նախադեպերը կունենան այն նույն նշանակությունը, ինչը եղել է և կա նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալներում:

МГЕР МКРТЧЯН – Судебный прецедент и проблема эффективности правосудия в международных уголовных судах. – В статье рассматривается роль, которую играют прецеденты при решении вопросов в международных уголовных судах, в частности в трибуналах по Руанде и бывшей Югославии. Речь идёт о вертикальной подчинённости судебных камер в указанных трибуналах, в частности, апелляционной и судебной палат. Анализируется значение прецедента как источника права в правовых системах мира, а также в Европейском суде по правам человека. На основании правовых формулировок, фигурирующих в судебных актах трибуналов, и мнений, высказанных в специальной литературе, делается вывод о том, что заключения по правовым вопросам в апелляционной камере трибунала по бывшей Югославии и Руанде, играют для апелляционных и судебных камер прецедентную и направляющую роль. Правовые заключения, отмеченные в судебных актах трибуналов, чрезвычайно важны при толковании многих процессуальных прав обвиняемого, а также для развития механизма международного уголовного правосудия.

MHER MKRTCHYAN – Judicial Precedent and the Problem of Justice Efficiency at International Criminal Courts. – The role of judicial precedent during the decision making process at international criminal courts, particularly at the Tribunals of Former Yugoslavia and Ruanda is discussed in the presented article. The author discusses the issues of vertical subordination between the mentioned tribunal chambers, particularly Appeal and Trial Chambers, analyses the role and impact of Precedent, as a source of law in the world's main judicial systems as well as at the European Court of Human Rights.

Putting on the same line the legal points of tribunals' judicial acts and the viewpoints expressed in literature, the author states that the legal conclusions of the Appeal chamber of the tribunals of Former Yugoslavia and Ruanda usually have precedential role for Appeal and Trial chambers when making decisions on the same issue. The legal conclusions mentioned in the Tribunals' judicial have important impact on the interpretation and clarification of defendant's numerous judicial rights as well as on the further development of the structure of international criminal justice.